ԿԵՆԱՑ ԾԱՌ

Կենաց ծառը սուրբ տեղ է զբաղեցնում հայկական մշակույթում՝ ծառայելով որպես հավերժական կյանքի, կենսունակության, իմաստության եւ աստվածային ներկայության խորհրդանիշ: Այն ներկայացնում է կապը երկնայինի (ճյուղերի) եւ երկրայինի (արմատների) միջեւ՝ խորհրդանշելով տիեզերքի ներդաշնակությունն ու հավասարակշռությունը: Հայ քրիստոնեության մեջ Կենաց ծառը հաճախ պատկերվում է կրոնական արվեստի եւ ճարտարապետության մեջ: Այն սերտորեն կապված է Եդեմի պարտեզի եւ արարչագործության աստվածաշնչյան պատմության հետ:
Կենաց ծառի մոտիվը սովորաբար հանդիպում է հայկական գործվածքների, գորգերի, խեցեգործության եւ այլ ավանդական արհեստների մեջ: Այն հաճախ պատկերվում է որպես ոճավորված ծառ՝ բարդ ճյուղերով եւ արմատներով, երբեմն զարդարված մրգերով, ծաղիկներով կամ թռչուններով: Հայոց պատմության մեջ «Կենաց ծառ» հասկացության հետ առնչվել են մի քանի տեսակի ծառեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը: Դրանցից են՝ ծիրանենին, նռենին, կաղնին, բարդին, սոսին: Ամենահայտնի սոսիներից մեկը՝ Տնջրի, որն ավելի քան 2000 տարեկան է, գտնվում է Արցախում:

Այս Կենաց ծառը՝ սոսին տնկվել է 2024 թվականի մայիսի 25-ին՝ հայության հոգեւորության, գիտական մտքի եւ դիմադրության խորհրդանիշ Տաթեւի վանական համալիրի տարածքում, Ռուբեն Վարդանյանի եւ նրա ընկերների անունից, Հայ Առաքելական Եկեղեցու օրհնությամբ՝ ի նշան հայ ժողովրդի ուժի, տոկունության եւ հոգեւոր միասնության: Կենաց ծառը տնկելու օրը նշանավորվել է ուխտագնացությամբ Տաթեւի վանական համալիր եւ Ռուբեն Վարդանյանի հիմնադրած «Մենք ենք մեր սարերը» կազմակերպության նախաձեռնությամբ հիմնված պտղատու այգու բացման հանդիսավոր արարողությամբ: «Կենաց ծառ» նախաձեռնությունը յուրատեսակ վերադարձ է ակունքներին, ազգային ավանդույթներին՝ այնտեղից վերածննդի համար անհրաժեշտ ուժ, եռանդ ու հույս քաղելու համար:

Նախաձեռնությանը միացած կազմակերպությունների եւ անհատների աջակցության շնորհիվ հավաքված գումարն ուղղվել է Տաթեւ համայնքի զարգացմանը:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր աջակիցներին՝

Էրիկ և Մելինա Էսրայելյաններ

Կարեն Սարկիսով

Արմեն Սարուխանյան

Էրիկ Հայրապետյան

Միխայիլ և Անահիտ Ասիրյաններ

2025 թվականին «Կենաց ծառի» շուրջ ստեղծվեց **«Արմատների պահապանների շրջան»** ճարտարապետական կոմպոզիցիան, որը խորհրդանշում է հայկական բարեգործական կազմակերպությունների ներդրումը հայ ժողովրդի՝ սերնդե-սերունդ փոխանցվող ավանդույթների եւ հոգեւոր արժեքների պահպանման գործում:

«Արմատների պահապանների շրջանի» մասնակիցներն են.

«Ազնավուր» հիմնադրամ

Հայ Օգնության Միություն

Հայկական բարեգործական ընդհանուր միություն

Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ (IDeA) բարեգործական հիմնադրամ

Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամ

«Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամ

ԴԱՐ տարածաշրջանային զարգացման եւ մրցունակության հիմնադրամ

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալություն

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն

TREE OF LIFE

The Tree of Life holds a sacred place in Armenian culture, serving as a symbol of eternal life, vitality, wisdom, and divine presence. It embodies the connection between the celestial (branches) and the earthly (roots), symbolizing the harmony and balance of the universe. In Armenian Christianity, the Tree of Life frequently appears in religious art and architecture. It is closely associated with the Garden of Eden and the biblical story of creation.

The Tree of Life motif is commonly found in Armenian textiles, carpets, pottery and other traditional crafts. It is often depicted as a stylized tree with intricate branches and roots, sometimes embellished with fruit, flowers or birds. In Armenian history, several types of trees have been linked to the concept of “Tree of Life”, each carrying its own meaning. Among them are apricot, pomegranate, oak, poplar, and plane trees. One of the most famous plane trees — Tnjri, which is over 2,000 years old, is located in Artsakh.

This Tree of Life, a plane tree, was planted on May 25, 2024, a symbol of Armenian spirituality, scientific thought and resistance, in the territory of the Tatev monastery complex, on behalf of Ruben Vardanyan and his friends, with the blessing of the Armenian Apostolic Church, as a testament to the strength, endurance and spiritual unity of the Armenian people. The day of the planting of the tree of life was marked by a pilgrimage to the Tatev monastery complex and a ceremonial opening of the fruit orchard established by Ruben Vardanyan’s “We are Our Mountains” organization. The “Tree of Life” initiative represents a return to the origins and national traditions for drawing the necessary strength, energy and hope for revival.

The funds raised through the support of participating organizations and individual contributors were directed toward the development of the Tatev community.

We extend our sincere gratitude to all those who took part in this initiative:

Drs. Eric and Melina Esrailian

Karen Sarkisov

Armen Sarukhanyan

Erik Hayrapetyan

Mikhail and Anahit Asiryan

In 2025, the architectural composition **“Circle of Root Guardians”** was created around the “Tree of Life”, symbolizing the contribution of Armenian charitable organizations to the preservation of the traditions and spiritual values of the Armenian people, passed down from generation to generation.

The participants of the “Circle of Root Guardians” are:

Aznavour Foundation

Armenian Relief Society

Armenian General Benevolent Union

Inintiatives for Development of Armenia (IDeA) Charitable Foundation

H. Hovnanian Family Foundation

«Teach for Armenia» Educational Foundation

DAR The Foundation for Regional Development and Competitiveness

«We are Our Mountains» Development Agency

«Orran» Benevolent NGO

ДРЕВО ЖИЗНИ

Древо жизни занимает священное место в армянской культуре, служа в качестве символа вечной жизни, мудрости и божественного присутствия. Оно олицетворяет связь между небесным (ветви) и земным (корни), символизируя гармонию и уравновешенность вселенной. В армянском христианстве Древо жизни часто изображается в религиозном искусстве и архитектуре. Оно тесно связано с Райским садом и историей Божественного Сотворения.

Мотив Древа жизни встречается в армянской вязке, ковроделии, гончарном деле и других традиционных ремёслах. Оно часто изображается как стилизированное дерево – со сложными ветвями и корнями, иногда украшенное фруктами, цветами или птицами. С понятием «Древо жизни» в армянской истории соприкасаются несколько видов деревьев, каждое из которых имеет свой сакральный смысл. Среди них: абрикосовое, гранатовое деревья, дуб, тополь, платан. Один из самых известных платанов – Тнджри, которому более 2000 лет, находится в Арцахе.

Это Древо жизни, платан, было посажено 25 мая 2024 года от имени Рубена Варданяна и его друзей с благословения Армянской Апостольской Церкви в Татевском монастырском комплексе – символе армянской духовности, научной мысли и стойкости – в знак силы, непоколебимости и духовного единства армянского народа. Посадка Древа жизни ознаменовалась паломничеством в Татевский монастырский комплекс и торжественной церемонией открытия плодового сада, разбитого здесь по инициативе учрежденной Рубеном Варданяном организации «Мы – наши горы». Инициатива «Древо жизни» – своеобразное возвращение к корням, национальным традициям для черпания отсюда силы, энергии и надежды.

Средства, собранные благодаря поддержке присоединившихся к инициативе организаций и отдельных граждан, были направлены на развитие Татевской общины.

Выражаем благодарность всем, кто принял участие в этой инициативе:

Эрик и Мелина Эсраиляны

Карен Саркисов

Армен Саруханян

Эрик Айрапетян

Михаил и Анаит Асиряны

В 2025 году вокруг «Древа жизни» была создана архитектурная композиция **«Круг хранителей корней»**, символизирующая вклад армянских благотворительных организаций в дело сохранения традиций и духовных ценностей армянского народа, передаваемых из поколения в поколение.

Участниками «Круга хранителей корней» являются:

Фонд «Азнавур»

Армянское общество милосердия

Всеобщий армянский благотворительный союз

Благотворительный фонд Инициативы развития Армении (IDeA)

Семейный фонд Г. Овнанян

Образовательный фонд «Преподавай, Армения!»

Фонд регионального развития и конкурентоспособности ДАР

Агентство развития «Мы – наши горы»

Благотворительная общественная организация «Орран»